

**ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը Տաթևում և Խնձորեսկում
մասնակցել է Եղեռնի 100-րդ տարելիցի կապակցությամբ կազմակերպված
միջոցառումներին**

24.04.2015թ.

Ապրիլի 24-ին Գորիսի տարածաշրջանի Խնձորեսկ գյուղական համայնքում Գարեգին Սևունցի անվան միջնակարգ դպրոցի նախաձեռնությամբ դպրոցի բակում կանգնեցվել է հուշակոթող՝ նվիրված ցեղասպանության զոհերի հիշատակին: Խաչքարի բացման արարողությանը ներկա էր նաև ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը:

Նախաձեռնությանն աջակցել է ծննդով Խնձորեսկցի, բարերար Արմիկ Փանդունցը: Խաչքարի կառուցման և տեղադրման աշխատանքներն սկսվել էին դեռևս մեկ ամիս առաջ:

Հուշակոթողի բացման արարողությանը աշակերտները հանդես եկան ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ելույթներով, կազմակերպվել էր նաև ֆլեշ մոբ:

Ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակում նախօրեին ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը Տաթևում մասնակցել է մոմավառության և հարգել 1.5 միլիոն զոհերի հիշատակը, այնուհետև ներկա է եղել Տաթևի գյուղապետ Մուրադ Սիմոնյանի, գյուղի բնակիչների և դպրոցի աշակերտների կողմից կազմակերպված միջոցառմանը: